ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 7

«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «Վարարակն» ՓԲԸ-ի միջև 25.12.2020 թվականին կնքված N A-25GQ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտի թիվ 2 միջնակարգ դպրոցի կառուցում» աշխատանքների կատարման պայմանագիրը լուծելու մասին

ք. Երևան «02» 07 2025թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ), ի դեմս գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Վարարակն» ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Անդրանիկ Բուդաղյանի,** ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին Կողմեր, հիմք ընդունելով Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի **2025 թվականի մայիսի 29-ի թիվ ՓՎ/67-2025** արձանագրային որոշումը, կողմերի միջև **2025 թվականի մայիսի 2-ին** կնքված համաձայնությունը, ինչպես նաև՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ առկա են պայմանագրի էական խախտումներ և կանխավճարը չի օգտագործվել աշխատանքների մոբիլիզացման վրա, **կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.**

1. Լուծել Կողմերի միջև միջև 25.12.2020թ. կնքված **«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտի թիվ 2 միջնակարգ դպրոցի կառուցում» աշխատանքների կատարման թիվ A-25GQ** ծածկագրով պայմանագիրը:

2. Կողմերը հաստատում են, որ Պատվիրատուի կողմից Պայմանագրի շրջանակներում տրամադրված կանխավճարի մնացորդը՝ 112,260,628 (հարյուր տասներկու միլիոն երկու հարյուր վաթսուն հազար վեց հարյուր քսանութ) ՀՀ դրամի չափով, Կապալառուի կողմից ենթակա է վերադարձման սույն համաձայնագիրը կնքելուց հետո՝ մինչև 2025 թվականի հուլիսի 15-ը ներառյալ, հակառակ դեպքում՝ կանխավճարի չմարված մասով Պատվիրատուն պահանջ կներկայացնի բանկային երաշխիքից գանձելու համար, ընդ որում, կանխավճարի չմարված մնացորդը որևէ կերպ չվերադարձվելու (այդ թվում՝ բանկային երաշխիքից չգանձելու դեպքում) դեպքում սույն համաձայնագիրը համարվում է չկնքված, իսկ Պայմանագիրը չլուծված:

3. Կողմերը հաստատում են, որ սույն համաձայնագիրը կնքելու պահի դրությամբ առկա չեն Կապալառուի կողմից կատարված, սակայն չընդունված և չվճարված աշխատանքներ, բոլոր աշխատանքների դիմաց Պատվիրատուի կողմից կատարվել է ամբողջական վճարում և առկա չեն կատարված աշխատանքի դիմաց չվճարված գումարներ:

4. Սույն համաձայնագրի 2-րդ կետում նշված կանխավճարի մնացորդը որևէ կերպ վերադարձվելուց հետո և սույն համաձայնագիրը կնքված համարվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն պարտավորվում է Կապալառուի կողմից որպես Պայմանագրի կատարման ապահովում ներկայացված Կատարման բանկային երաշխիքը վերադարձնել Կապալառուին, ընդ որում, Պատվիրատուի կողմից Պայմանագրի կատարման ապահովում ներկայացված Կատարման բանկային երաշխիքը Կապալառուին չվերադարձնելու դեպքում Կատարման բանկային երաշխիքը համարվում է վերադարձված:

5. Պայմանագրի 55.1 կետով նախատեսված պահված գումարի՝ 22,554,042 (քսաներկու միլիոն հինգ հարյուր հիսունչորս հազար քառասուներկու) ՀՀ դրամի կեսը կվճարվի Կապալառուին «ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղհովիտի թիվ 2 միջնակարգ դպրոցի կառուցում» աշխատանքների ձեռքբերման նոր մրցութային ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման արդյունքում ավարտական ակտը

ավարտական ակտի տրամադրումից հետո 1 տարվա ավարտից հետո, երբ Ծրագրի ղեկավարը հաստատում է, որ բոլոր թերությունները շտկվել են նախքան այս ժամանակաշրջանի ավարտը:

6. Կապալառուն պարտավորվում է սույն Համաձայնագիրը կնքելու օրվանից սկսած մինչև 120 օր ժամկետով իր հաշվին իրականացնել շինարարական հրապարակի պահպանությունը, այդ թվում՝ հոգալ պահակային ծառայության, կոմունալ և այլ անհրաժեշտ ծախսերը:

7. Սույն Համաձայնագրի կնքման օրվա դրությամբ Կապալառուի կողմից շինարարական աշխատանքների կատարման համար ձեռք բերված և չօգտագործված նյութերը համարվում են վերջինիս սեփականությունը: Դրանց համար Պատվիրատուն վճարումներ չի կատարում:

8. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 2-րդ կետով սահմանված պայմանների կատարման դեպքում:

9. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ	«Վարարակն» ՓԲԸ
ՀՀ ք. Երևան, 0037, Կ. Ուլնեցու 31	Հասցեն՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Գորիս, Արցախյան խճուղի 4
ՀՎՀՀ 00846441	Հեռ.՝ (093) 09-44-44
Հ/Հ 1510032335590100	ՀՎՀՀ՝ 09200036
Բանկ «Արարատբանկ» ԲԲԸ	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Գործադիր տնօրեն	Հ/Հ՝ 1150003709129142
Ս. ԲԱԴԻՆՅԱՆ	Տնօրեն՝ Ա. ԲՈՒԴԱՂՅԱՆ
(ստորագրություն)	(ստորագրություն)